Երկրորդ ընթերցում

Լրամշակված նախագիծ

Պ-487-25.02.2020,06.04.2020-ՄԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2004 թվականի նոյեմբերի 9-ի աշխատանքային օրենսգրքի 176-րդ հոդվածի 1-ին մասում լրացնել նոր 5-րդ կետ.

«5) իր ազգային, կրոնական տոները կամ հիշատակի օրեր նշելու համար՝ ոչ ավելի, քան տարեկան չորս օր:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Պ-487-25.02.2020,06.04.2020-ՄԻ-011/1) ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2004 թվականի նոյեմբերի 9-ի աշխատանքային օրենսգրքի 176-րդ հոդվածի 1-ին մասում լրացնել նոր 5-րդ կետ.

«5) հր ազգային, կրոնական տոները կամ հիշատակի օրեր նշելու համար՝ ոչ ավելի, քան տարեկան չորս օր:

~~Սույն կետով նախատեսված արձակուրդի տրամադրման համար գործատուն կարող է գրավոր պահանջել աշխատողից գրավոր հիմնավորում:»:~~

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՄԱՍԻՆ» (Պ-487-25.02.2020,06.04.2020-ՄԻ-011/1) ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	**Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը**	**Առաջարկություն (փոփոխություն, լրացում)**	**Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը**	**Առաջարկություն ներն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը**
1.Աժ պատգամավոր Ռուստամ Բաքոյան	1.Հոդվածում	ՀՀ աշխատանքային օրենսգրքի 176-րդ հոդվածի 1-ին մասում լրացվող 5-րդ կետում «ազգային» բառից առաջ լրացնել «իր» բառը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն	Առաջարկը ընդունվել է
2.Աժ պատգամավոր Ռուստամ Բաքոյան	1.Հոդվածում	ՀՀ աշխատանքային օրենսգրքի 176-րդ հոդվածի 1-ին մասում լրացվող 5-րդ կետի 2-րդ պարբերությունը հանել նախագծից «Սույն կետով նախատեսված արձակուրդի տրամադրման համար գործատուն կարող է գրավոր պահանջել աշխատողից գրավոր հիմնավորում:»:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն	Առաջարկը ընդունվել է